



**Կոռուպցիայի ընկալման 2020թ. համաթիվը բացահայտում է ,  
որ լայնատարած կոռուպցիան թուլացնում է կորոնավիրուսի  
համավարակի հակազդումը և սպառնում է համաշխարհային  
վերականգնմանը**

Կոռուպցիան և կորոնավիրուսն ուժեղացնում են նահանջը  
ժողովրդավարությունից

*Բեռլին, հունվարի 28, 2020* – Կոռուպցիայի ընկալման 2020 թվականի համաթիվը (ԿԸՀ), որն այսօր հրապարակվեց Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից, վեր է հանում այն իրողությունը, որ չնվազող կոռուպցիան կորոնավիրուսի համավարակի ֆոնին խարխլում է առողջապահական համակարգերը և նպաստում է ժողովրդավարության նահանջին:

Այն երկրները, որոնց ԿԸՀ-ն ավելի բարձր է, ավելի շատ ներդրումներ են անում իրենց առողջապահական համակարգերում, ավելի ունակ են տրամադրելու առողջապահական ծառայություններ իրենց բոլոր քաղաքացիների համար և ավելի քիչ հավանական են նրանց կողմից ժողովրդավարական նորմերի խախտումները, ժողովրդավարական հաստատությունների խաթարելը կամ օրենքի գերակայության արհամարհումը:

«Կորոնավիրուսի համավարակը միայն առողջապահական և տնտեսական ճգնաժամ չէ: Այն կոռուպցիոն ճգնաժամ է: Ճգնաժամ, որի կառավարումը մենք ներկայումս տապալում ենք: Անցած տարին մեր հիշողության մեջ իրեն հավասարը չունեցող փորձություն էր պետությունների համար, և այն երկրները, որոնցում կոռուպցիայի մակարդակներն ավելի բարձր էին, ավելի պակաս ընդունակ էին դիմակայելու իրենց առջև ծառայած մարտահրավերներին: Բայց նույնիսկ այն երկրները, որոնք գտնվում են



ԿԸՀ-ի վերին հորիզոնականներում, պետք է շտապ կերպով անդրադառնան իրենց մոտ և իրենց սահմաններից դուրս կոռուպցիայի տարածման մեջ իրենց խաղացած դերին:»  
- նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Նախագահ տիկին Դելիա Ֆերեյրա Ռուբինո:

### **Ընդհանուր տեղեկություններ ԿԸՀ 2020-ի վերաբերյալ**

ԿԸՀ 2020-ի հրապարակումը դասակարգում է 180 երկրների և տարածքների ԿԸՀ-երն ըստ իրենց հանրային ոլորտի կոռուպցիայի մակարդակների ընկալման՝ հիմնվելով փորձագիտական գնահատումների և գործարար ոլորտի ղեկավարների 13 ուսումնասիրությունների վրա: Կիրառվել է 0-ից 100 սանդղակը, որտեղ ԿԸՀ 0 արժեքը նշանակում է վերին աստիճանի կոռումպացված, իսկ, 100-ը՝ բացարձակ մաքուր:

Դասակարգման աղյուսակը 88-ական միավորով գլխավորում են **Դանիան և Նոր Զելանդիան**, իսկ եզրափակում են **Սիրիան, Սոմալին և Հարավային Սուդանը**, համապատասխանաբար 14, 12 և 12 միավորներով:

### **Վիճակագրորեն զգալի փոփոխություններ**

Սկսած 2012 թվականից, որը ԿԸՀ ներկա մեթոդաբանությամբ իրականացվող հաշվարկների սկզբնակետն է, 26 երկրներ էապես բարելավել են իրենց ԿԸՀ միավորները: Դրանցից են **Էկվադորը** (39 միավոր 2020 թ.-ին), **Չուևատանը** (50), **Գայանան** (41), **Մյանմարը** (28) և **Հարավային Կորեան** (61):

ԿԸՀ իրենց միավորների զգալի նահանջ արձանագրած երկրներից են **Բոսնիա և Հերցեգովինան** (35 միավոր 2020 թ.-ին), **Գվատեմալան** (25), **Լիբանանը** (25), **Մալավին** (30), **Մալթան** (53) և **Լեհաստանը** (56):

Աշխարհի երկրների մոտավորապես կեսի մոտ համարյա մեկ տասնամյակ է, ինչ նկատվում է լճացման վիճակ, երբ նրանց ԿԸՀ արժեքները չեն փոփոխվում: Սա ցույց է



տայիս, որ կոռուպցիայի արմատական պատճառների սանձահարմանն ուղղված այդ երկրների կառավարությունների ջանքերը հայտնվել են փակուղու մեջ: Երկրների ավելի, քան երկու երրորդի ԿԸՀ արժեքները 50-ից փոքր են:

### **Կորոնավիրուսի համավարակ**

Կոռուպցիան կրիտիկական սպառնալիք է հանդիսանում քաղաքացիների կյանքի և ապրուստի միջոցների համար, մասնավորապես երբ այն զուգակցվում է հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակի հետ: Առկա է փոխկապակցվածություն հանրային ոլորտի մաքրության (չկոռումպացվածության) աստիճանի և առողջապահության ոլորտում արվող ներդրումների ծավալների միջև: Օրինակ, **Ուրուգվայը** (71 միավոր), որն ունի Լատինական Ամերիկայում ԿԸՀ ամենաբարձր արժեքը, կատարում է մեծ ծավալի ներդրումներ առողջապահության ոլորտում և ունի համաճարակաբանական հսկողության ուժեղ համակարգ, որը նրան շատ օգնեց՝ արդյունավետ արձագանքելու կորոնավիրուսի համավարակին և այլ համաճարակային հիվանդություններին, ինչպիսիք են, օրինակ, դեղին տենդը և Չիկան:

Ի տարբերություն Ուրուգվայի, **Բանգլադեշում**, որի ԿԸՀ արժեքը հավասար 26-ի, և որը քիչ է ներդնում առողջապահության մեջ, կորոնավիրուսի համավարակի ժամանակ կոռուպցիան ծաղկում էր սկսած առողջապահական հաստատություններում կաշառակերությունից և վերջացած այդ նպատակով հատկացված օգնության յուրացումով: Կոռուպցիան լայն տարածված է նաև բժշկական պարագաների, նյութերի և սարքավորումների գնումներում: Կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրները նաև հակված են լինել կորոնավիրուսի ճգնաժամի ժամանակ օրենքի գերակայության և ժողովրդավարության նորմերի ամենավատ խախտողները: Այդպիսի երկրներից են **Տիվայինները** (34 միավոր), որտեղ կորոնավիրուսի համավարակին արձագանքում



ուղեկցվում էր մարդու իրավունքների և խոսքի ազատության վրա լայնածավալ հարձակումներով:

Շարունակելով իր նահանջը՝ ԱՄՆ-ն 2020թ.-ին հասավ 2012թ.-ից սկսած ԿԸՀ իր ամենացածր արժեքին (67 միավոր): Ի հավելումն ամենաբարձր մակարդակում շահերի բախման և պաշտոնեական դիրքի չարաշահման հետ կապված մեղադրանքներին, 2020 թվականին համավարակի հաղթահարմանն ուղղված ԱՄՆ 1 տրիլիոն դոլար ծավալով օգնության փաթեթի նկատմամբ թույլ վերահսկողությունը ծնեց լուրջ մտահոգություններ և նշանավորեց նահանջ հաշվետու կառավարումը խթանող ժողովրդավարական վաղեմի նորմերից:

## **Առաջարկություններ**

Անցած տարին շեշտեց բարեվարքությանը մարտահրավերները նույնիսկ ԿԸՀ բարձր միավորներ ունեցող երկրներում՝ ապացուցելով, որ աշխարհի և ոչ մի երկիր զերծ չէ կոռուպցիայից: Կոռուպցիան կրճատելու և ապագա ճգնաժամերն ավելի արդյունավետ դիմակայելու համար Թրանսփարենսի Ինթերնեշնլը բոլոր պետություններին առաջարկում է.

- **Ուժեղացնել վերահսկողական մարմինները՝** ապահովելու համար միջոցների հասանելիությունը առավել կարիքավորների համար: Հակակոռուպցիոն մարմինները և վերահսկողական հաստատությունները պետք ունենան բավարար բյուջեներ, միջոցներ և անկախություն իրենց պարտականություններն կատարելու համար:
- **Ապահովել բաց և թափանցիկ գնումներ՝** պայքարելու համար անօրինականությունների դեմ, վեր հանելու շահերի բախումը և ապահովելու համար արդար գնագոյացումը



- Պաշտպանել ժողովրդավարությունը և նպաստել քաղաքացիական սեկտորի ընդլայնմանը՝ ստեղծելու համար նպաստավոր պայմաններ իշխանություններին՝ հասարակությանը հաշվետու լինելու համար
- Հրապարակել վերաբերելի տվյալները և երաշխավորել տեղեկատվության մատչելիությունը՝ ապահովելու համար դյուրին, հասանելի, ժամանակին և բովանդակալից տեղեկատվություն հանրությանը:

Ճանաթագրություններ.

Թրանսփարենսի Ինթերնեշնլի Համաշխարհային առողջապահության ծրագրի նախորդ հետազոտությունը հայտնաբերել էր, որ կոռուպցիան համաշխարհային առողջապահական համակարգից տարեկան խլում է 500 միլիարդ ԱՄՆ դոլար:

- *Արհամարված համավարակր. Ինչպես է կոռուպցիան առողջապահական ծառայությունների մատուցման ոլորտում վտանգում Առողջապահական ծառայությունների համընդհանուր մատուցմանը (2019թ. սեպտեմբեր)*

Կորոնավիրուսի համավարակի ժամանակ փաստագրված կոռուպցիան առողջապահության համակարգում ներառում է հիվանդներից անօրինական վճարումներ պահանջելը, մսխումը և գողությունը, վարակվածների իրական թվերի թաքցնելը, գերավճաները, ֆավորիտիզմը և մանիպուլյացիաները տվյալների հետ:

- *Արհամարված համավարակր. Կորոնավիրուսի համավարակի հետևում. կոռուպցիայի ազդեցությունը առողջապահական ծառայությունների մատուցման վրա (2020թ. սեպտեմբեր)*

## **Թրանսփարենսի Ինթերնեշնլի մասին**

Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերջին ավելի քան 25 տարիներին կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաշխարհային



կազմակերպությունն է: Համատեղե՛ք մեր ջանքերը <http://transparency.org> կայքի միջոցով:

### **Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին**

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի ամենանշանակալի հրապարակումը՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: Համաթիվը տալիս է կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով պետություններն ըստ համաթվի արժեքների: 2012 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերանայեց համաթվի հաշվարկման համար օգտագործվող մեթոդաբանությունը, որը հնարավորություն տվեց տարի առ տարի համեմատելու համաթվի արժեքները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք [www.transparency.org/research/cpi](http://www.transparency.org/research/cpi)